

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅՆԱԳՆԱԼ

ԽԵԹԵՐԵՆ *marnuwa* ԲԱՌԸ

Հնդեվրոպական լեզուներում **mer-* **mor-* բազմիմաստ արմատով կազմվում են մի շարք համանուններ: Խեթերենը, ի թիվս այլ հնդեվրոպական լեզուների, ևս ունի վերոնշյալ արմատով կազմված բառեր: Մենք փորձել ենք առանձնացնել խեթերենում բառերի մի շարք, որն իմաստային առումով համընկնում է հնդեվրոպական **mer-* **mor-* արմատի ունեցած որոշ իմաստներին: Ստորև ներկայացվող աղյուսակի վերջին շարքում մենք դիտարկել ենք խեթ. *marnuwa* բառը (խմիչքի անվանում), որն էլ հանդիսանում է մեր հոդվածի նյութը: Այն հնչողությամբ նման է խեթ. *mer/mar* - «ամհետանալ» բառին¹, որն, ամենայն հավանականությամբ, ևս հանգում է հնդեվրոպական **mer-* **mor-* բազմիմաստ արմատին և համապատասխանում վերջինիս «սևացնել, մութ գույն, բիծ» նշանակությամբ: Հնարավոր է նաև, որ հայերեն *մառն* (մառախուղ, մեզ, մշուշ), բարբռ. *մռռ*, (մորի, մոշ) *մառի* (լրթագույն, մուգ մանուշակագույն) բառերը ևս ծագում են նույն արմատից: Եվ պատկերն ավելի հասկանալի դարձնելու համար հնդեվրոպական արմատին զուգահեռ կրեթերեն խեթերեն և հայերեն օրինակները: Ի դեպ. այս աղյուսակում հնչյունաիմաստական համընկումներ են դիտարկվում խեթերենի և հայերենի բարբռառային տարբերակների միջև: (Խեթերեն օրինակների ընտրությունը մերն է², իսկ հնդեվրոպական և հայերեն զուգահեռները բերվում են ըստ Գ. Ջահուկյանի)³:

Հնդեվրոպական	Խեթերեն	Հայերեն
<i>*mer</i> - հյուսել, կապել թել, թուկ	<i>marra</i> - (նշանակությունների շարքում)-արձակել, հանգույց քանդել	—
<i>mer</i> -առկայծել	<i>marnuwa</i> - (նշ. շարքում)-ամտեսանելի	—
<i>mer</i> - մեռնել	<i>maru</i> , <i>meru</i> - ամհետանալ, չքանալ, մեռնել <i>marnuwa</i> - մահվան գնալ, մահկանացու	մեռանիմ, մարդ «մահկանացու»
<i>*mer</i> - տրորել	<i>marra</i> — ջարդել, բաժանել, կտրտել, մանրել	«մարտ»-պայքար մուրճ, մաշեմ <i>բրբռ</i> , մեռ. մառ «վայտի ծեղ», մառնել «ցորենը մանրել, կալսել»
<i>mer</i> — սևացնել, մութ գույն, բիծ	<i>marnuwa</i> - խմիչքի անվանում	մռայլ, մառ-ա-խուղ (Գ. Ջահուկյանի բերած այս օրինակին մենք կհավիչենք <i>բրբռ</i> , մառնի «լրթագույն, մուգ, մանուշակագույն» <i>բրբռ</i> , մռռ, (մոշ, մորի, մորենի):

Ինչպես նշվեց, հողվածի բուն նյութն է marnuwa բառը:

Մակայն մինչ լեզվաբանական վերլուծություն կատարելը, ներկայացնենք marnuwa խմիչքի կիրառությունն ու հատկանիշներն ըստ խեթական տեքստերի: Այն հաճախ է հանդիպում հատկապես ծիսապաշտամունքային տեքստերում: Marnuwa-ն խմիչք է, որ մատուցվում է աստվածներին, քազավորական ընտանիքի անդամներին, խմվում ծիսակարգի մասնակիցների կողմից, անգամ ծիսական արարողակարգի հիմնական բաղկացուցիչ մասն է կազմում (տես ստորև):

Օրինակ՝ Խաթթի Երկրի Ամպրոպի աստծուն նվիրված ծիսակատարության ժամանակ, այլ խմիչքների շարքում, քարե կոթողի առջև հեղվում է նաև marnuwa-ն⁴:

Խեթ (^{EZEN}•assnnaš) տոնի ժամանակ արքայազնը այցելելով տարբեր պալատականների տներ, մասնակցում է ծիսական ճաշկերույթների, որոնց ընթացքում, զարեջրի և ուտեստեղենի հետ մատուցվում է նաև marnuwa-ն⁵:

Իլլույանկա օձի և Ամպրոպի աստծո հականարտությանը նվիրված առասպելության առաջին տարբերակում, երբ Ինարա (Inara) աստվածուհին Իլլույանկայի և նրա որդիների համար ընդունելություն է կազմակերպում, նրանց հյուրասիրած խմիչքների շարքում հիշատակվում է marnuwa-ն, որը խմելուց հետո օձերն այլևս չեն կարողանում հետ փոխադրվել իրենց բույնը, ինչի շնորհիվ էլ Ամպրոպի աստվածը հաղթում է նրան⁷: Այս տեքստից ակնհայտ է, որ marnuwa-ն հավանաբար ոգելից խմիչք է, քանզի օձը հարբում է:

marnuwa-ն ունի նաև չարախափան նշանակություն: Այս մասին է խոսվում տեքստերից մեկում, որում ասվում է, որ marnuwa-ն կարող է ստիպել չարին հեռանալ (անհետանալ), իսկ լավ բաներին (բարուն) ի հայտ գալ⁸:

Մակայն ամենաուշագրավը խեթական մի ծես է՝ կապված Տիտիուտսի աստվածուհու հետ: Marnuwa-ով լցված ավազանում խորանի առջև ծնկաչոք և մերկ նստում են *ալանցու*⁹ երկու մարդիկ (ծիսակարգի մասնակիցների անվանում): Տիտիուտսի աստվածուհու քրմուհին և պռոնկուհիները վերակացուհին երեք անգամ վազում են marnuwa-ով իր ավազանի միջով: Վերակացուհու ձեռքին փայտե դանակ է, որի առջևից ավազանի միջով վազում է Տիտիուտսի աստվածուհու քուրմը՝ ձեռքին գավազան, վերջինիս դիմաց էլ կապում են sipartin¹⁰: Քուրմը *ալանցու* մարդկանց մեջքին երեք անգամ լցնում է marnuwa և նրանք երիցս վտղ փչելով՝ դուրս են գալիս ավազանից: Ծեսի վերջում քազավորը մոտենում է Ամպրոպի աստծո կոթողին, խոնարհվում և գնում աղոթատեղի:

Ըստ Վ. Արժինբայի, ծեսում ի հայտ է գալիս խորանի (օջախի կրակի) և ավազանի (ջուր) այս երկու խորհրդանիշների հակադրությունը¹¹:

Ծեսն ինքնին շատ խորհրդապաշտական է, քատերականացված և, քանի որ նրանում դերակատարում ունեն նաև պռոնկուհիները, կարելի է ենթադրել, որ այստեղ տեղի էին ունենում էին նաև օրգիաներ, ինչը կարող

էր կապված յինել պտղաբերության պաշտամունքի հետ: Փաստերն *marnuwa*-ն այստեղ ներկայանում է կարծես օծող, խորանի առջև մաքրագերծող, ինչպես նաև պտղաբերության պաշտամունքի հետ առնչվող խմիչք: Ավելացնենք. որ *marnuwa*-ն մատուցվում է նաև այլ աստվածություններին և նրանց հետ կապված ծեսերում (Տելպիմուս, Արևի աստվածուհի, Տաուրի աստծուն և այլն):

Խեթական սեպագիր տեքստերում *marnuwa*-ն հիշատակվում է թե՛ առանձին, թե՛ զինու, գարեջրի և այլ խմիչքների հետ, որից կարելի է ենթադրել, որ այն, համեմայն դեպս, խադողի զինուց և սովորական գարեջրից տարբերվող մի խմիչք է կամ նրանց առանձնահատուկ տեսակ:

Ա. ֆոն Շուլերը նկատել է, որ Կապադովկիայի հին ասորեստանյան տեքստերում հանդիպում է *marnuwatum* անվանմամբ խմիչք, որը պատրաստվել է գարուց և նա ենթադրում է, որ վերջինս գարեջուր է եղել: Հաշվի առնելով խեթ. *marnuwa*-ի հետ *marnuwatum*-ի ունեցած հնչյունական միասնությունը, ինչպես նաև այն համաձայնաբեր, որ խեթ. *marnuwa*-ն մատուցվում է ¹⁰AGRIC-ի¹² կողմից, Շուլերը ենթադրել է, որ խեթ. *marnuwa*-ն ևս գարեջրի տեսակ է¹³:

marnuwa խմիչքին անդրադարձել է նաև Ն. Սկրտչյանը, որը վերլուծելով տեքստերում նրա կիրառությունը, եկել է այն եզրակացության, որ խեթ. *marnuwa* (*marnuwanta*) բառի արմատն է *marnu*-ն և այն պահպանվել է հայերենի մաս կամ մասն բառերում, որը նշանակում է «մեզ և մշուշ», ինչպես նաև «զինու երեսին բռնած թողամք», նա եզրակացնում է, որ *marnuwa*-ն հողի տակ պահվող զինու հատուկ տեսակ է¹⁴:

Փաստորեն, խնդրո առարկա խմիչքի վերաբերյալ արտահայտված է երկու կարծիք՝ ա) որ այն գարեջուր է, բ) որ այն հողում պահվող զինու հատուկ տեսակ է:

Այնուհանդերձ, փորձենք բառակազմական վերլուծության ենթարկել *marnuwa* խմիչքի անվանումը: Այն տեքստերում հանդիպում է *marnu*, *marnuwa*, *marnuwan*, *marnuwant* ձևերով:

Վերջին երկու ձևերի մասին կարելի է ասել հետևյալը. *marnuwan* — կարծում ենք. որ կազմված է «*marn*» արմատից և խեթ. *-uwan* վերջածանցից¹⁵, որը նշանակում է «ինչ-որ բանից ստեղծված, առաջացած» (*marn* + *-uwan*): Այսինքն. կարելի է ենթադրել, որ *marnuwan* նշանակում է. *marn*-ից պատրաստված (խմիչք): Ինչ վերաբերում է *marnuwant* ձևին, ապա այս դեպքում արմատը «*marn*» է, որին ավելացել է *-(u)want* խեթ. վերջածանցը¹⁶ (տես ս օրինակ խեթ. *kast*- «սով», *kist(u)want*- «սոված»): Նույն ձևով *marn* > *marn(u)want*:

Փաստորեն, թե՛ *marnuwan*, թե՛ *marnuwant* ձևերում արմատը հանդիսանում է «*marn*»-ը, որը բխեցվում է խեթ. **mer*, **mar* — ջրամալ, անհետամալ, մահամալ արմատից¹⁷:

Ինչպես տեսանք, այս նույն արմատն էր ընկած նաև վերը բերված աղյուսակի մի շարք խեթ. բառերում: Այդ աղյուսակում *marnuwa* խեթերեն բառը մենք ենթադրում ենք, որ կարելի է բխեցնել հնդեվրոպական **mer*,

mor բազմիմաստ արմատի «սև, մութ գույն, բիծ» իմաստից: Փորձենք փաստարկել մեր այս մտեցումը.

Հայտնի է, որ ցանկացած խմիչք պատրաստվում է ինչ-որ բույսից կամ մրգից և ուսումնասիրելով մրգերի և բույսերի հնդեվրոպական անվանումները պարզվեց, որ «սև թթենու» կամ «սև թթենու պտղի» ինչպես նաև «մորու» կամ «մոշի» հնդեվրոպական անվանման համար վերականգնվում է *mor* - արմատը, որն էլ ծագումնաբանորեն կապված է վերոնշյալ *mer-mor* (սև, մութ գույն) արմատի հետ¹⁸: Հնդեվրոպական լեզուներում «սև թթենու պտուղների» և «մորու», «մոշի» անվանումների իմաստային առումով միախառնումը պայմանավորված է հավանաբար նրանց ունեցած արտաքին և գույնային նմանությամբ: Հունարեն *μόρον* - թթենու պտուղ, թուփ, մոշ, լատ. *morus* - թթենի, *morum* - թթենու պտուղ, մոշ, վալլ. - *merwydden* - թթենու պտուղ¹⁹:

Հայերենում ևս այդ արմատը պահպանվել է մոր «մոշ, մորենու պտուղ» ձևով²⁰: Հայերենում ունենք նաև *Մորեսա* «թութ» ձևը, որը պահպանված է միայն Երեմիա Մեղրեցու մոտ²¹, որը ըստ Հ. Աճառյանի համարվում է փոխառություն հունարենից: Ինչ վերաբերում է «թութ» բառին, ապա այն հայերենում համարվում է փոխառություն արամեերենից²²:

Հնարավոր է ենթադրել, որ խեթ. *maruwa*-խմիչքը կարող է պատրաստված լինել «սև թթից» կամ «մորուց և մոշից», քանի որ նրա արմատը «*maru*»-ը ևս կարելի է հանգեցնել հնդեվրոպական վերոնշյալ արմատին: Ենթադրելի է, որ նման արմատով ծառի կամ թփի հիշատակություն ևս պետք է լիներ խեթական տեքստերում: Իրոք *maru* կոչվող ծառի անվանում պահպանվել է խեթական տեքստերում, որը սակայն, հանդիպում է առանց *gis* գաղափարագրի (ծառերի ե բույսերի համար դրվող գաղափարագիր), ինչն էլ կասկածների տեղիք է տալիս, որ խոսքն իրավամբ ծառի մասին է²³: Սակայն վերլուծելով տեքստը, որում հանդիպում է բառը, կարծում ենք, կարելի է ենթադրել, որ խոսքը ծառի մասին է: Տեքստը հետևյալն է. «*O, hu' zayu, qoi karmogeghir pteq hamar toun ajnpan paptar, nqran marnan-p...*»²⁴: Իհարկե, միանշանակորեն չի կարելի պնդել, որ տեքստում խոսվում է հենց թթենու ծառի մասին՝ փաստերի բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է «Մև թթենու ծառին» (*Morus nigra*), ապա այն տարածված է Միջերկրածովյան և Հարավ-արևելյան Ասիայի երկրներում, սակայն նրա հնագույն հայերենիքը համարվում է Առաջավոր Ասիան: Նրա մեծ պտուղները բնութագրվում են մութ մանուշակագույն, գրեթե սև գույնով²⁵: Ավելացնենք, որ Եգիպտոսում այս թթենու տեսակին մոտ մեկ այլ տեսակ համարվում է «աստվածների սրբազան ծառ», որ մեծ ծխական և առասպելական նշանակություն ուներ (հիշենք *maruwa*-ի ունեցած ծխական նշանակությունը)²⁶:

Փաստերի սակավությունը հնարավորություն չի տալիս պնդել նաև, որ *maruwa*-ն կապված է *maru* - ծառի անվանման հետ, սակայն հնչյունական նմանությունը և բերված նյութը, կարծում ենք մտորումների տեղիք

են տալիս:

Մեր առաջադրած վարկածներին օգնության կարող է զալ մաս հայերեն բարբառներում պահպանված նյութը: Ինչպես նշվեց վերը, Ն. Մկրտչյանը ենթադրում էր, որ *maruwa* բառի *maru* արմատը պահպանված է հայ. «մամն»՝ ա) «մեզ, մշուշ, մառախուղ», բ) «զինու երեսին բռնած թաղանթ» բառերում: Մենք այս տեսակետին կավելացնենք հետևյալը. Հր. Աճառյանը հայ. «մամն» (ն. հլ. գործ մառամբ) - մշուշ, մեզ, մառախուղ՝ ծագում է հնդեվրոպական նախալեզվի **mer-*, **mor-* արմատից) բառի հոդվածում ենթադրում է, որ արանից է կազմված Ղարաբաղի բարբառի *մաամոշ < մառամոշ* «մի տեսակ մոշ, որի վրայ մշուշի բարակ մի խաւ է պատած», ինչպես մաս Մաշկերտի բարբառի *մառի* «լրթագույն, մուգ մանիշակագույն» բառերը (*մառի* բառի իմաստը, ի դեպ, շատ հիշեցնում է սև թթի վերոնշյալ նկարագրությունը)²⁷:

Հայտնի է, որ մի շարք դեպքերում բարբառները գրաբարի համեմատությամբ հանդես են բերում արմատական-բառակազմական զգալի տարբերություններ, որոնց հիմքերը, ըստ Գ. Ջահուկյանի, թերևս հասել են մինչև վաղմջափայերենի շրջանը: Եվ մնանատիպ օրինակներ թվարկելիս, գրաբարյան արմատական ձևի դիմաց աճականով կամ հին ածանցով ձևեր ունեցող բառերի շարքում մա հիշատակում է մաս *մոր* (հ.ե. - **mor*) և բարբառային (մոռ, մոշ՝ մորշ) (հ.ե. **mor-s*) ձևերը²⁸: Կարելի է ենթադրել, որ խեթ. *maruwa*-ի *maru-* արմատը, եթե իսկապես նշանակում է *սև թուփ* կամ *մորի*, *մոշ*, ապա այն կարող է պահպանված լինել հայերեն բարբառային *մոռ* և վերը նշված *մառի* բառերում:

Բացի այդ, հայերեն *մառան* բառը ևս ստույգ ստուգաբանություն չունի: *Մառանը* -ա հոլովման է և նշանակում է «շտեմարան» (զինու, կերակրեղենի, մթերքի են), Նոր Հայկազյան բառարանում բխեցվում է *մառ* «մութ» բառից և մեկնվում է «ներքին և մթին սենեակ»²⁹: Փաստորեն, կարելի է ենթադրել, որ *մառան* բառը ևս հանգում է *մառն* արմատին, որն էլ ծագում է հնդեվրոպական **mer*, **mor* արմատից: Միզուցե հայերեն *մառան* բառն էլ ծագումնաբանորեն կապված է խեթ. *maruwa*-խմիչքի անվանման հետ. հատկապես, եթե հաշվի առնենք, որ Ն. Մկրտչյանը *maruwa*-ն համարում է հողի տակ պահվող խմիչք: Հիշենք մաս, որ *maruwa*-ն, բացի հարբեցնելուց, ուներ չքացնելու, անհետացնելու հատկություն (օրինակ՝ չարը), որը իմաստային առումով կապվում է հողում թաղելու, պահելու հատկանիշի հետ:

Ի մի բերելով վերը գրվածը՝ մենք առաջադրում ենք հետևյալ վարկածները.

ա) *maruwa* բառի *maru* արմատը հավանաբար ծագում է հնդեվրոպական **mer-*, **mor-* արմատի «սևացնել, մութ գույն, բիծ» իմաստից, որի հետ ծագումնաբանորեն կապվում է սև թթեմու պտղի, ինչպես մաս մորու կամ մոշի հնդեվրոպական անվանման համար վերականգնվող **moro* արմատը:

բ) Խեթ. տեքստերում հանդիպող *marnuwa*-ն հավանաբար ոգելից խմիչք է, ունի ծխական, չարախափան նշանակություն և հնարավոր է պատրաստվում էր սև թթից, մորուց կամ մոշից: Ի դեպ, միշտ պետք է հիշել, որ այս տարբեր բույսերի անվանումները միախառնված են հանդես եկել հնդեվրոպական լեզուներում:

գ) Հայերենում այն հնարավոր է պահպանվել է բարբառային *մոր* (մորի), *մառի* (լրթագույն, մուգ մանուշակագույն), ինչպես նաև հայերեն *մառան* (զիմու պահեստ, շտեմարան) բառերում:

HASMIK HMAYAKYAN

HITTITE MARNUWA

The author attempts to etymologize Hittite *marnuwa* from I-E **mer-*, **mor-* (meaning blacken, dark color) that entomologically relates to I-E reconstructed stem *mōro* for black mulberry or black raspberry.

The author supposes that *marnuwa* found in Hittite texts is an alcoholic drink having ritual evil preventing function and probably was prepared from black mulberry or black raspberry. It should be remembered that in I-E languages names for these different plants always has been mixed.

In Annenian it probably was preserved in dialectical words *mor* (raspberry), *mar* (dark lilac, dark magenta), as well as in Armenian *maran* (wine storage).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. The Hittite Dictionary of the Oriental Institute of the University of Chicago. Edited by Hans G. Güterbock and H.A.Hoffner, vol.3, fasc. 2, Chicago, 1988, S.193.
2. Խեթերեն բառերի օրինակները բերվում են ըստ Johann Tischler, Hethitisches Handwörterbuch, Insbruck 2001 - The Hittite Dictionary of the Oriental Institute of the University of Chicago բառարանների:
3. Ջանուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 55:
4. Ардзинба В.Г., Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, стр. 13-14.
5. ⁸²²⁸⁴ *hassumās* – 4 օր տևող խեթական ծես, որն իրականացվում է արքայազնի կողմից, որն այդ օրվա ընթացքում այցելում է մի քանի ծխական եաստատություններ:
6. Ардзинба В.Г., Ритуалы и мифы..., стр. 40.
7. The Hittite Dictionary..., S.194 (KBo 3.7 i 14-18).
8. The Hittite Dictionary..., S.193 (KUB 41.23 ii 2-5).
9. Ալանցու – խեթական ծեսերին մասնակցող մարդկանց անվանում, որոնց բնորոշ էր ծխականրգի ընթացքում աղօթելը կամ անիծելը. որոշ դեպքերում նրանք երաժշտական գործիքների վրա էին նվագում կամ պարում էին:
10. *šiparti* – եազուստ, եազուստի մաս. Johann Tischler, Hethitisches Handwörterbuch..., S.152.
11. Ардзинба В.Г., Ритуалы и мифы..., стр.104-105.

12. ¹⁴AGRIG – խեթական տեքստերում մատուցվակ, որ մատուցում է ոչ թե գինի, այլ ուրիշ խմիչքներ:
13. The Hittite Dictionary..., S.194.
14. Մկրտչյան Ն., Խեթա-հայկական ընդհանրություններ. Լրաբեր Հասարակական Գիտությունների, էջ 63-35, Երևան, 1976:
15. – uwan խեթական վերջածանցի մասին տե'ս Иванов В.В., Хеттский язык, Москва, 1963, стр. 194.
16. – (u)wan խեթական վերջածանցի մասին տե'ս Иванов В.В., Хеттский язык, Москва, 1963, стр. 189, таб. № 2.1.
17. matuwa - քաղի ծագումը խեթական mer, mar բայից տե'ս The Hittite Dictionary..., S.193.
18. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, том II, Тбилиси, 1984, стр. 645-646.
19. Նույն տեղում, էջ 645-646:
20. Աճառյան Հր., Հայերեն Արմատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 397:
21. Աճառյան Հր., Հայերեն Արմատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 348:
22. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646.
23. The Hittite Dictionary ., S.192.
24. The Hittite Dictionary... S.192 (KBo 12.70 rev. III 10-12).
25. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646, Вавилов Н.И., Избранные труды (в пяти томах), Москва-Ленинград, том 1, стр. 205, 343.
26. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646.
27. Աճառյան Հր., Հայերեն Արմատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 263:
28. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան. 1987, էջ 255:
29. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 262-263: